

առաջնորդեր, վասն որոյ եւ կոչելի *Հեծելապետ*. վայելուչ էր այսպէս լինել ըստ հին հայկական պարծանաց, որոց հռչակեալ էին հեծեալք եւ երիվարք:– Ըստ աւատական օրինաց՝ թագաւորն էր նախագլուխ եւ առաջնորդ բանակին. իսկ ուր նա ոչ՝ Գունդստապլն լինէր միագլխապետ եւ կարգաւորիչ ամենայնի, եւ կրէր զնշան թագաւորին, որ էր *Առիծ* կանգուն: Իսկ Լեւոն կրէր եւ զնշան Ս. Պետրոսի՝ զընկալեալն ՚ի Քահանայապետէն՝ յերթալն ընդդէմ այլազգեաց:– Առաջին Գունդստապլ յիշատակեալ՝ է *Պալտինն* այն՝ որ մեռաւ յամի 1188, յարշաւելն յառումն Պոականայ. յետ նորա (1207) *Ապլղարիպ* Տէր Կուստաֆոյ, ապա Պայլն Կոստանդին (1210-26) հայր Հեթմոյ թագաւորի եւ Սմբատայ՝ որ յաջորդեաց զհայրն (1226-1276), եւ սմա՝ որդի իւր Լեւոն. յետ նորա թուի յայլ տուն փոխանցեալ պաշտամանն¹¹²:

Ըստ ձեռանէ Գունդստապլին եւ երկրորդ նորին ՚ի զինուորութեան՝ էր **Մարաջախտն**, (*Marescalcus* ըստ Լատինաց Միջին դարուց, *Maréchal* Փռանկաց), որ ըստ բառական նշանակին չէ հեռի յախոռապետէ. եւ ընդ նմին տնտեսէր զպէտս եւ զկարգ բանակին, եւ զորօշն կամ զմեծ նշանն պատերազմին կրէր. իսկ եթէ թագաւորն ինքնին ելանէր ընդ զօրուն՝ գունդստապլին անկ էր նշանակութիւնն, եւ մարաջախտին՝ զգունդստապլին կրել նշան, որպէս տեսաք ՚ի Թագաւորօրհնէքն: Առաջին

¹¹² Յիշատակեալ (Գունդստապլ) Սպարապետք.

†1188 *Պալտինն*.

1207 *Ապլղարիպ*.

1210-26 *Կոստանդին Պայլ*.

1226-79 *Սմբատ, որդի Կոստանդինի*.

1276 *Լեւոն, որդի Սմբատայ*.

1279 *Օշին եղբայր Լեւոնի, որ եւ Սենեսկալ*.

1283 *Լեւոն*.

1294-305 *Հեթում, Տէր Կոռիկոսոյ* (Պատմիչն)

1307 *Օշին Տէր Կանչոյ*.

1308 †29 *Կոստանդին, որդի Հեթմոյ Պատմչի*.

1330-42 *Ճուան Լիւզինեան, հայր վերջին (Ե) Լեւոնի*.

1360 *Հեթում*:

Գունդստապլի վերնագիր այսպիսի ընծայեալ է. «Ծառայ Աստուծոյ եւ տիրոջ ծառայից նորին, ամենագով եւ ամենախնամ ՚ի զօրեղ Փրկչէն մերմէ Յիսուսէ՝ անվանելի զօրութեամբ արիացեալ, քաջամարտիկ զինուոր եւ արիագոյն Սպարապետ տանն Հայոց, բարեպաշտ եւ քրիստոսասէր իշխանաց իշխան, Գունդստապլ» Ա. Ա.: